



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 9 ՀՈԿՏԵՄԲԵՐ, 2017

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն վբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա վիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՂՄՈՍ 34

ԳՈՀՈՒԹԻԻՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԲԱՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Անդադար Տէրը պիտի օրհնաբանեմ.

անոր օրհներգութիւնը շրթներուս վրայ պիտի ըլլայ շարունակ:

Տէրն է միակ պարծանքս. թող փառապեալները լսեն եւ ուրախանան:

Ինձի հետ Տէրը փառաւորեցէք, միասնաբար անոր անունը փառաբանեցէք:

Ես Տիրոջ դիմեցի, եւ աղօթքիս պատասխանեց, զիս ապարեց բոլոր վախերէս:

Տիրոջ մօտեցէք, որպէսզի ուրախութեամբ ճառագայթէք,

եւ յուսախաբ չէք ըլլար բնաւ:

Ես՝ փառապեալս՝ Տիրոջ դիմեցի, եւ անիկա խնդրանքս լսեց,

զիս ապարեց բոլոր նեղութիւններէս:

Ճաշակեցէք, եւ տեսէք՝ թէ ինչքան քաղցր է Տէրը.

երանի՛ անոր՝ որ Տիրոջ կ'ապաւինի:

Տիրոջ երկիւղը ունեցէք, դուք՝ ով սուրբեր.

անոր երկիւղը ունեցողները ոչ մէկ բանի կարօտ են:

Հօրագոյն մարդիկն իսկ կարօտութեան եւ անօթութեան կրնան մաքնուիլ,

սակայն Տիրոջ դիմողները բանի մը կարօտ պիտի չմնան:

Կ'ուզես երկար կեանք ունենալ, կ'ուզես բարօր օրեր տեսնել.

լեզուդ չարախօսութեան մի՛ ծառայեցներ,

շրթներդ բնաւ թող նենգութիւն չխօսին:

Հեռու մնա չարիքէն, եւ բարիք ըրէ,

խաղաղութիւն կամեցիր եւ վայն հետապնդէ:

Տիրոջ աչքերը արդարներուն վրայ կը հսկեն,

սկանջները միշտ պատրաստ են անոնց աղաչանքը լսելու:

Սակայն Տէրը հակառակ է չարագործներուն,

որոնց յիշատակն իսկ պիտի ջնջէ այս աշխարհէն:

Արդարին նեղութիւնները որքան ալ շատ ըլլան,

Տէրը կ'ապարեք բոլորն ալ, եւ վայն անվնաս կը պահէ:

Տէրը կը փրկէ իրեն ծառայողները.

դատապարտութիւն պիտի չունենան

անոնք՝ որոնք իրեն կ'ապաւինին:

ՇԱՐԱԿԱՆ - ԱՂՈԹՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:

Սմենասուրբ Երրորդութիւն, սուր աշխարհիս խաղաղութիւն:

Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:

Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

ՕՐՈՒՄՆ ՆԻԺԹԸ



ՊԵՏՐՈՍ ԱՌԱԲԵԱԼԻ ԸՆԴՀԱՆՐԱՊԿԱՆ ՆԱՄԱԿԷՆ

3:8-17

ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ ՉԱՐՉԱՐՈՒԻԼ (3:8-17)

Պեպրոս Առաքեալ յսրբապատկազմին այս նամակի 5:12 մէջ կ'ըսէ. «Այս հակիրճ նամակը ձեզի գրեցի Սիդուանոսի ձեռքով, որպէսզի քաջալերեմ ձեզ եւ վստահեցնեմ թէ Քրիստոսի չարչարակից ըլլալը Աստուծմէ փրկուած իսկական շնորհք մըն է, որ դուք կը վայելէք»: Այո, այս նամակը երբ կը գրէր Պեպրոս Առաքեալ, հաւաքացեալները հալածանքի մէջ էին: Բայց այսօր, որ կը կարդանք այս նամակը, 21րդ դարուն, եւ կ'ուզենք ականջ փայլ այնպէս գրուածներուն, կու գանք այն եզրակացութեան, թէ ինչպէս Աստուծոյ օգտագործելով մարդը, այս պարագային Գալիլիացի ձկնորս մը, որուն անունը Սիմոն, որուն պիտի փրկուէր Պեպրոս անունը, որ կը նշանակէր ժայռ, Իր ծրագիրը յառաջ փրկուելու: Ահա իր խօսքը իւրաքանչիւրին ուղղելէ յետոյ, Պեպրոս Առաքեալ կը վերադառնայ այս անգամ բոլորին. «դուք բոլորդ» (8 հմբ): Պեպրոս իր խօսքը կ'ուղղէ մէջբերելով Սաղմունեն հապուած մը (34:12-16), անով ցոյց փայլու մէկ ամբողջութիւնը Աստուծաշունչին, Հին եւ Նոր Կտակարաններուն:

Ահա այս ներդրեանն ու հալածանքին մէջ, Պեպրոս, ինչպիսի ձեռով պէտք է ապրի: Պեպրոս Առաքեալ կը ներկայացնէ հիմնական 6 կէտեր.

1. Իրարու համախոհ ըլլալ, որ կը նշանակէ նոյն միտքը ունենալու, համախորհուրդ: Ինչպէս որ Քրիստոս պիտի ըսէ. «Հայր, այնպէս ինչպէս ես ու դուն մէկ ենք, իրենք ալ թող մէկ ըլլան» (Յովհ 17:21):
2. Ուրախակից եւ ցաւակից: Ինչպէս կարելի է ուրախակից եւ ցաւակից ըլլալ երբ համախոհ չենք: Բայց այնքան արեւն, որ կ'ապրինք եսակեղրոն կեանք, դժուար թէ ըլլանք ուրախակից եւ ցաւակից:
3. Եղբայրասէր ըլլալ կը նշանակէ, ինչպէս Սաղմունեագուն պիտի ըսէ. լեզուն պահել չարութիւն չխօսիլ: Չարիք չգործել, այլ՝ բարիք ընել: Կը նշանակէ խաղաղութիւն կամենալ եւ հետապնդել:
4. Բարեգութ եղէք, ինչպէս Աստուծոյ Ինք բարեգութ է, գթած է: Ինչպէս անառակ որդիի հայրը երբ փեսա իր փղուն վերադարձը, գթած:
5. Խոնարհամիտ, ինչպէս Քրիստոս ինք: Այդպէս ալ սորվեցուց Իր աշակերտներուն. «Ինձմէ սորվեցէք, որովհետեւ հեզ եմ եւ խոնարհ սրտով» (Մտթ 11:29):
6. Օրհնեցէք: Չարին փոխարէն չար մի հապուցանէք, ոչ ալ նախապիտի փոխարէն՝ նախապիտի:

Ահա Աստուծոյ ճիշդ արտոյտ համար ձեզ կանչեց կ'ըսէ Պեպրոս Առաքեալ, Իրեն նմանելու: Կը դժուարանանք այս բոլորը նախ հասկնալու, երկրորդ՝ զանոնք կարարելու նայինք մեր հաւաքի ախոյեանին՝ Յիսուս Քրիստոսին: Անոր համար ալ Պօղոս Առաքեալ կ'ըսէ. «Աշխարհը մեզ յիմար ու փկար կը կոչէ»:

Պեպրոս Առաքեալ նաեւ կը թելադրէ ըսելով. «Անոնց ահէն մի վախնաք եւ մի խռովիք: Պատրաստ եղէք հեզութեամբ եւ երկիւղածութեամբ պատրաստանալու բոլոր անոնց՝ որոնք բացարարութիւն կ'ուզեն ձեր ունեցած յոյսին մասին» (14-15 հմբ): Ինչպէս Քրիստոս Ինք եւս պիտի ըսէր. «Եթէ մարդոց առջեւ զիս դաւանիք, ես ալ Հօրս առջեւ պիտի դաւանիմ, որ դուք իմ աշակերտներս էք» (Մտթ 10:32): Հերաբրքրական է, սակայն, որ այս բառերը Պեպրոս Առաքեալն է գրողը, որ ինք արեւօք վախցաւ պատրաստանալու փրկուելու, ուրաքաւ Քրիստոսի աշակերտ ըլլալը, կամ գինք ճանչնալը: Բայց հիմա որ այս բառերը կ'արձանագրէ, արդէն կը նշանակէ ինչ քան փոխուած է իր մէջ: Մանաւանդ երբ Քրիստոս իր յարութենէն յետոյ զինք պիտի վերահասարարէր ըսելով. «Սիմոն, Յովնանի որդի, կը սիրե՛ս զիս: Արածէ ոչխարներս» (Յովհ 21:15-18):

Պեպրոս Առաքեալ նաեւ կը խօսի չարչարանի մասին, որ պէտք է ի մտի ունենալ: Չարչարանք կայ որ անբաժանելի մասնակի է ընկերութեան, որուն նաեւ ենթակայ քրիստոնեան: Նաեւ չարչարանք կայ, որ անբաժանանելի մասնակի է քրիստոնեայ հաւաքացեալին:

Ինչպես կարելի է պարասխան փալու բոլոր անոնց, որոնք կ'ուզեն գիտնալ մեր յոյսի մասին:

1. Մեր սրբերուն մէջ ըլլայ Քրիստոսի ներկայութիւնը, որպէսզի կարենանք միշտ պարասպ ըլլանք հեգութեամբ եւ երկիւղածութեամբ պարասխան փալու մեր յոյսի մասին:
2. Մեր հաւարարմութեան մէջ Քրիստոսի նկարմամբ որպէս մեր Տէրը, մեր հրամանադարը: Ինչպէս որ էր հարիւրապետը, ասոր կ'ըսեն գնա, կ'երթայ, երկուր, եւ կու գայ:
3. Արթուն եւ պարասպ ըլլալ, պարասպակամ:
4. Ուշադրութեամբ սորվելու եւ պարասպուելու մեր յոյսի մասին: Ինչո՞ւ պէտք է հարցնեն մեր յոյսի մասին, որովհետեւ պիտի փեսնեն, որ մեր կեանքովը յոյսը կը ներշնչենք, անյոյս ընկերութեան մէջ:
5. Այս բոլորը ընելու հեգութեան եւ երկիւղածութեամբ, երբոր կ'ապրինք մեր քրիստոնէական հաւաքը հեգութեամբ եւ երկիւղածութեամբ:

Ահա այս բոլոր բարիքները վայելելէ յետոյ, մեզի կը մնայ մաս եւ բաժին հանելու նաեւ անոնց, որոնք փակաւին խաւարին մէջ են, որպէսզի Լոյսը փեսնեն եւ Լոյսին գան ու փրկուին:

*Պահապան ամենայնի Քրիստոս,
աջ ին հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի նանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ ին արարածոց եւ ինձ բազմամեղիս:*

